



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական միության պատվիրակություն Հայաստանում  
Մամուլի և տեղեկատվության բաժին

Երևան, 27-ը սեպտեմբերի 2012թ.

## ԵՄ հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն ստորագրում է ֆինանսական փաստաթղթեր Հայաստանի հետ

*Այսօր Ընդայնման և եվրոպական հարևանության քաղաքականության ԵՄ հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն ստորագրելու է երկու ֆինանսական համաձայնագրեր Եվրոպական միության և Հայաստանի միջև:*

Այս ֆինանսական համաձայնագրերի միջոցով Եվրոպական միությունը աջակցելու է ԵՄ-ն և Հայաստանի միջև երկկողմ համաձայնագրերի՝ Ասոցացման համաձայնագրի՝ ներառյալ Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիրը և Մուտքի արտոնագրերի դյուրինացման/Ռեադմիսիայի համաձայնագրերի բանակցությունների ընթացքին ու իրականացմանը:

Ֆինանսավորումը նաև բյուջետային օժանդակություն կտրամադրի Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ Հայաստանի համար Եվրոպական հարևանության քաղաքականության Գործողությունների ծրագրով համաձայնեցված միջոցառումներին՝ պետական կառավարման բարեփոխումների և առևտրի ընթացակարգերի դյուրինացմանն առնչվող բազմաթիվ հարցերի լուծմանն օժանդակելու նպատակով:

Հանձնակատար Ֆյուլեն և վարչապետ Տիգրան Սարգսյանը կմասնակցեն ստորագրման արարողությանը, ԵՄ հանձնակատարի ս.թ. սեպտեմբերի 27-28-ին Հայաստան կատարելիք այցի ծրագրի մի մասն է: Այցի ընթացքում նախատեղվում են հանդիպումներ Հայաստանի բաժրաստիճան պաշտոնյաների, քաղաքական կուսակցությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

### Ընդհանուր տեղեկություններ

2011-2013թ.-ներին Հայաստանի հետ համագործակցության ԵՄ-ն գերակա ուղղություններն են ժողովրդավարական կառույցների և ճշգրիտ կառավարման կատարելագործումն ու առևտրի, ներդրումային դաշտի և սոցիալ-տնտեսական բարեփոխումների բարելավումը:

Ֆինանսական համաձայնագրերի ստորագրման հիմքը **43.1 մլն. եվրո** արժողությամբ **ԵՀՔԳ 2011թ.-ի տարեկան գործողությունների ծրագիրն** է, որը բաղկացած է **2 գործողություններից**:

1. «ԵՄ-Հայաստան համաձայնագրերի կից շրջանակային ծրագիր - ՏԳԾ 2011»՝ 19.1 մլն. եվրո: Այն ԵՄ օժանդակության փաթեթի առանցքային մասն է, որը փոխանցվում է Արևելյան գործընկերություն նախաձեռնության Պետական կառավարման մարմինների զարգացման համապարփակ ծրագրի շրջանակներում:

Պետական կառավարման մարմինների զարգացման համապարփակ ծրագիրը օգնում է գործընկեր երկրներին բարեփոխումներ իրականացնել այն գերատեսչություններում, որոնք էականան դերակատարում ունեն ԵՄ-ն հետ երկկողմ հարաբերությունների շուրջ բանակցելու և իրականացնելու համար. Ասոցացման համաձայնագիր՝ ներառյալ Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիրն ու Մուտքի արտոնագրերի դյուրինացման/Ռեադմիսիայի համաձայնագրերը:

Հայաստանում այն կաջակցի կառավարության կողմից նախապատրաստած պետական մարմինների բարեփոխումների ծրագրերի 3 հիմնական խնդիրների հաղթահամանը՝ (1) ԵՄ-Հայաստանի Ասոցացման համաձայնագրերի շուրջ բանակցությունների նախապատրաստում (2) արդարադատության, ազատության և անվտանգության ոլորտի բարեփոխումների խորացում (3) Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու շուրջ բանակցությունների նախապատրաստում

2. «Աջակցություն Հայաստանի կառավարությանը՝ ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացման և ապագա Ասոցացման համաձայնագրի նախապատրաստման նապատակով»՝ 24 մլն. եվրո: ԵՄ-ն կողմից Հայաստանին տրամադրվող աջակցության երկրորդ հիմնական բաղադրիչն է, որը փոխանցվում է բյուջետային օժանդակության ծրագրով: Այն ուղղվելու է ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմանն ու պետական ֆինանսների կառավարման և պետական սեկտորի թափանցիկության հետ առնչվող բարեփոխումներին՝ ներառյալ էլեկտրոնային կառավարումը: Այն կօգնի նաև համապատասխանեցնել Հայաստանի առևտրի ոլորտի օրենսդրությունը ԵՄ նորմերին ու չափանիշներին: